տանքները համակարգած գեներալ-լեյտենանտ Հովհաննես Հունանյանը: Նրանց փոխանցվեց Առաջնորդական Օրհնության Գիր և հուշանվեր՝ Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդության կողմից:

Սրբազան արարողության ավարտին կատարվեց նաև եկեղեցու մերձակայքում գտնվող Սուրբ Խաչ մատուռի օրհնությունը, ապա՝ մատաղօրհնության ավանդական արարողությունը, որին հաջորդեց ժողովրդական ուրախ տոնախմբությունը:

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի Մշակույթի Հանձնախմբի և Թբիլիսիի Մշակութային հարաբերությունների կենտրոն «Կովկասյան տան»8 համատեղ նախաձեռնությամբ ու Վրաստանում ՀՀ դեսպանատան աջակցությամբ, նոյեմբերի 24-ից 26-ը Թբիլիսիում կազմակերպվեց թբիլիսահայ լուսանկարիչների ցուցահանդես: Ներկայացվեցին Եսայի Աբովյանի, Յուրի Ակուլյանի, Յուրի Մեչիտովի, Ազատ Մանուկյանի, Թեմուրի Գևորգյանի, Ալեքսանդր Մամուլովի, Արտյոմ Կիրակոզովի, Ռուբեն Ռուխկյանի և Յուրի Տերտերյանի բազմաբովանդակ աշխատանքները:

Միջոցառմանը օրհնության և գնահատանքի խոսքով հանդես եկան առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը, Մշակույթի հանձնախմբի համակարգող Միքայել Ավագյանը, ճանաչված լուսանկարիչ Յուրի Մեչիտովը, Թբիլիսիում լույս տեսնող «Կավկազսկի ակցենտ»8 պարբերականի գլխավոր խմբագիր Համլետ Զուկակիշվիլին, «Կովկասյան տան»8 հայկական մասի վարիչ Վիկտորիա Մաքսոևան:

Բանախոսները կարևորեցին հատկապես այն, որ Վրաստանի անկախացումից հետո այս նախաձեռնությունն առաջինն էր իր բնույթով: Ներկաների համոզմամբ, Վիրահայոց թեմի կողմից կազմակերպվող նման միջոցառումները կնպաստեն եղած ավանդների շարունակմանն ու զարգացմանը, որովհետև վիրահայ լուսանկարչական արվեստը հնակունք պատմություն ունի և պատշաճ տեղ է գրավում հայ մշակութային կյանքում:

Խրախուսվեց նաև միջոցառման ձևը՝ լուսանկարիչներին միասին ներկայացնելը, որն, անշուշտ, կազմակերպիչների կողմից վիրահայությանը համախմբված տեսնելու ևս մեկ բարի ու արդյունավետ քայլ էր:

Ցուցահանդեսին ներկա էին նաև Վրաստանում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Տ. Զուզեպպե եպիսկոպոս Պազոտտոն, ներկայացուցիչ Վրաստանում Բապտիստական Եկեցեցուց, վիրահայ ճանաչված նկարչուհի Գայանե Խաչատուրյանը, հայ ու վրացի անվանի այլ արվեստագետներ, համայնքային ներկայացուցիչներ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ